

Հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը գրականության դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց

Կազմեց՝ Սաշայան Արմինե

Կապանի թ. 6 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանում

Կապան 2023
Բովանդակություն

1. Նախաբան -----
-- էջ 3
2. Հետազոտական համատեքստ ----- էջ 4-5
3. Գործնական համատեքստ ----- էջ 6-8
4. Հետազոտության ընթացքը ----- էջ 8-9
5. Տվյալների մշակում և վերլուծություն ----- էջ 10-12
6. Ամփոփում ----- էջ 12-13
7. Գրականության ցանկ ----- էջ 14
8. Հավելվածներ ----- էջ 15-23

1. Նախաբան

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը,որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն,այն է ձևավորել սերունդ,որն ունի ինքնուրույն, քննադատաբար մտածելու կարողություն ու հմտություն:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատրաստ լինի ժամանակի մարտահրավերներին, զինված լինի ոչ միայն իր պարապած առարկայի գիտելիքների խոր և բազմակողմանի իմացությամբ,այլև կարողանա այն մատուցել այնպիսի հնարամտությամբ և վարպետությամբ,որ բավարարի սովորողների և՛ հետաքրքրությունները, և՛ իմացության մակարդակը:Գաղտնիք չէ,որ կան ինֆորմացիայի բազմազան և ժամանակակից տեղեկատվայան աղբյուրներ,որոնցից շատ հմտորեն և ինքնուրույն օգտվում են սովորողները: Կրթության համակարգը պահանջում է էական բարեփոխումներ,յուրաքանչյուր աշակերտի լիարժեք ներգրավում ուսման բոլոր գործընթացներում՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ազատ,կայուն և շարունակական զարգացման նպաստավոր պայմաններ և հավասար հնարավորություններ,սերունդներին փոխանցել ազգային մշակութային ժառանգականությունը,որը խթան է հանդիսանում արժանապատիվ քաղաքացու ձևավորման ու զարգացման համար

Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավվածության բարձրացման համար ուսումնասիրել եմ ժամանակակից ուսուցման մի քանի մեթոդներ և հնարներ,որոնց միջոցով կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել ստեղծագործական և քննադատական

մտածողությունը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, զարգացնել ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, խմբում աշխատելու կարողությունները, ինչպես նաև մտքի ճկունությունն ու մտքի սահունությունը, զատել գլխավորը երկրորդականից, կազմել գրագետ խոսք:

2. Հետազոտական համատեքստ

Այսօր ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական են համարվում բացատրական գննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության՝ գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, որի ընթացքում վերջինս հանդես է գալիս միայն վերարտադրողի դերում, ինչը քիչ է նպաստում աշակերտի ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը, դասարանի ոչ բոլոր աշակերտներին է ներգրավվում դասընթացին: Ժամանակակից սովորողակենտրոն ուսուցման գործընթացը պահանջում է ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց կիրառման արդյունքում աշակերտը ուսուցանվող նյութը չի ստանում որպես պատրաստի ամբողջություն, այլ այդ թեմայի կամ խնդրի ամբողջացման գործում ունենում է իր անմիջական ներդրումը՝ որպես հետազոտող, ուսուսասիրող, համադրող և վերլուծող: Այս է պատճառը, որ ժամանակակից ուսուցման գործընթացում կարևորվում են ակտիվ ուսուսաստության մեթոդները, որտեղ մեծ տեղ է կազմում աշակերտի ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը, ինչպես նաև խթանում է հիմնովին ներգրավվածությունը դասապրոցեսին:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի

մատուցում, մտապահում և վերարտադրություն,այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ,խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ,ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունի ուսուցման գործընթացում: Օրինակ՝ կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները
- Կատարելագործել արդեն ձեռք բերած հմտությունները և կարողությունները
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն <<ակտիվ ուսուսմանության մեթոդ>> հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են ինտերակտիվ սեմինարը,

թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղերը և այլն:

Ակտիվ ուսուցման մեթոդները


Մրանք մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությանը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ակտիվ ուսուցման մեթոդները բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով:

Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: Այս մեթոդները ապահովում են աշակերտների ակտիվությունը, մտածական և գործնական գործունեության բազմազանությունը, խթանում նրանց ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը: Ուսուսման ուսուցման ակտիվ մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Կիրառելով այս մեթոդները՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

3. Գործնական համատեքստ


Ակտիվ ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ



Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ **աշակերտները պասիվ լսողներ են: ՈՒսուցիչ-աշակերտ կապը իրականացվում է** հարցումների, թեստերի, թեմատիկ աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ-աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:


Ակտիվ մեթոդ



Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ են: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն:

Ինտերակտիվ մեթոդ

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ:



Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարման: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում, կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

Եվ այսպես, համադրելով ունեցած խնդիրներն ու դրա լուծման համար նախատեսված ռազմավարությունը, սկսեցի հետազոտական աշխատանքս՝ հաշվի առնելով մի քանի կարևոր փաստեր.

- Հետազոտական աշխատանքի թեման պետք է համապատասխանեցնեմ ուսումնական ծրագրին
- Հետազոտությունն անցկացրել եմ 7-րդ դասարանում (18 աշակերտ) գրականություն առարկայից և կատարել եմ որոշ վերլուծություններ՝ ինչպես են նրանք ուսումնառության ակտիվ մեթոդների կիրառման միջոցով ներգրավվում դասընթացին:

4.Հետազոտության ընթացքը

Ըստ <<գրականություն>> առարկայի պետական ծրագրի՝ 7-րդ դասարանում առաջին կիսամյակում ուսումնասիրում ենք Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը,<<Ես իմ անուշ Հայաստանի>>, <<Հայրենիքում>>,<<Տաղ անձնական>> բանաստեղծությունները: Թեմային հատկացված է 7 դասաժամ: Նախքան թեմայի ուսումնասիրությունը դասարանում կատարեցի նախնական գիտելիքների ստուգում հատորոշիչ թեստ 1-ի միջոցով (տես Հավելված 4): Նպատակս էր բացահայտել՝ ինչ գիտեն Եղիշե Չարենցի մասին, քանի որ թեման նրանք ուսումնասիրել են նախորդ դասարաններում:

Դիտարկումների ժամանակ դասարանում աշխատեցի և՛ ավանդական մեթոդներով, և՛ ակտիվ ուսումնառության մեթոդներով: Նպատակս էր պարզել՝ որ մեթոդներն են առավել արդյունավետ, որ մեթոդների միջոցով են ավելի շատ աշակերտներ ներգրավվում դասին, մեծ ակտիվություն և հետաքրքրություն ցուցաբերում: Հետազոտության ընթացքում դիտարկվեցին սովորողների գործունեությունը թե՛ անհատական աշխատանքների ժամանակ, թե՛ խմբում դերակատարում ունենալու, համագործակցելու տեսանկյունից, այսինքն, թե ինչքանով են կարողանում նրանք ինքնուրույն աշխատել դասանյութի հետ, ինչպես են կարողանում աշխատել խմբում, կարողանում են աշխատել զույգերով,

ինչպիսի տրամաբանական կապեր են կարողանում ստեղծել ինքնուրույն, դասընկերոջ կամ ուսուցչի օգնությամբ:

Գրողի կենսագրությունն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը ներկայացրի ավանդական մեթոդներով: Աշակերտները ուշադրությամբ լսում էին, արձագանքում հարցերին, բայց դասարանում ակտիվ մթնոլորտ չէր նկատվում:

<<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծության ուսումնասիրությունը իրականացրի 2 դասաժամում՝ կիրառելով ակտիվ ուսումնասիրության մեթոդներ՝ <<Մտածի՛ր – գու՛յգ կազմիր – քննարկիր>>, <<Մտագրոհ>>, <<5 բույեանոց շարադրանք>>, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, խմբային աշխատանք:

Հետազոտության ընթացքում դասերն անցկացվեցին ըստ Հավելված 1,2 - ում ներկայացված 2 դասապլանի:

Դիտարկման ընթացքում եկա այն եզրահանգման, որ ակտիվ ուսումնասիրության մեթոդներ կիրառելու ժամանակ աշակերտները ավելի ազատ են անկաշկանդ կարողանում են հայտնել իրենց մտքերը, բանավիճել, կարծիքներ փոխանակել: Այն նաև հնարավորություն է տալիս լսել բոլոր աշակերտներին, ինչը չես կարող անել ավանդական մեթոդներով դաս կազմակերպելիս: Դասի ավարտին աշակերտներին տվեցին լրացնելու գնահատման թերթիկ՝ կիրառելով մաթեմատիկական կարողունակությունը:

Թեման ավարտելուց հետո դասարանին դարձյալ առաջադրեցի հայտորոշիչ թեստ (տես հավելված 4), որի նպատակն էր պարզել՝ ինչպես են յուրացրել թեման ակտիվ ուսումնասիրության մեթոդների կիրառման ժամանակ:

Կիրառվեց նաև հարցաթերթիկ հասկանալու համար ուսումնասիրության դժվարությունները, որոնց բախվում են աշակերտները սովորելու ընթացքում: Հարցաթերթիկները լրացվեցին անանուն: Լրացված հարցաթերթիկների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանք գերադասում են զույգերով կամ փոքր խմբերով աշխատանքը: (տես հավելված 5)

5.Տվյալների մշակում և վերլուծություն

Տվյալների հավաքագրումը կատարվեց հայտորոշիչ թեստերի արդյունքների վերլուծության, հարցաթերթիկների ուսումնասիրության հիման վրա:

Հայտորոշիչ թեստերի արդյունքներն ամփոփվեցին ըստ առաջադրանքների 50% և ավելի կատարված լինելու:

Ըստ հետազոտության արդյունքների՝ 7-րդ <<q>> դասարանում գրանցվել են.


- ✓ հայտորոշիչ թեստ 1-ի առաջադրանքների 50% և ավելի հաղթահարումը- 11 աշակերտ կամ սովորողների 61%-ը
- ✓ Հայտորոշիչ թեստ 2-ի առաջադրանքների 50% և ավելի հաղթահարումը - 13 աշակերտ կամ սովորողների 72%-ը:

Հայտորոշիչ թեստ 1-ի և հայտորոշիչ թեստ 2-ի արդյունքների վերլուծություն

Առաջադիմություն

□ թեստ 1 առաջադիմ.՝ %


□ թեստ 2 առաջադիմ.՝ %



Ըստ հարցաթերթիկի արդյունքների վերլուծության՝ ակտիվ ուսումնասիրության հակված են 18 սովորողներից 12-ը կամ սովորողների 67%-ը:

Ըստ հարցաթերթիկի արդյունքների վերլուծության՝ ակտիվ ուսումնառության հակված են 18 սովորողներից 12-ը կամ սովորողների 67%-ը:

Հարցաթերթիկ



6.Ամփոփում

Ամփոփելով ստացված արդյունքները՝ կարելի ասել, որ սովորողները <<գրականություն>> առարկայի ծրագրային նույն ավելի հեշտությամբ յուրացնում են ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառմամբ:

Նման մեթոդների կիրառումը մեծացնում է նյութի ավելի լավ ընկալման հավանականությունը, խմբային աշխատանքի դեպքում դասընկերոջ կողմից մի անգամ ևս բացատրվում է ուսումնասիրել նյութը՝ դրանով իսկ նպաստելով ավելի լավ յուրացմանը: Մեծանում է նաև նրանց՝ իրենց կարողությունների

նկատմամբ հավատը, հետևաբար և ինքնավստահությունը, ձևավորվում են դրական փոխհարաբերություններ դասընկերների միջև, համագործակցության տարրեր: Շատ կարևոր է նաև խմբի ճիշտ ձևավորումը, յուրաքանչյուր խումբ ստանձնում է որևէ դերակատարում:

Խմբերում աշխատելու հաջողությունը կախված է ուսուցչի՝ ճիշտ լրացնելու, դրանցում աշխատանքը կազմակերպելու, նրանց ուշադրությունը բաշխելու կարողությունից:

Այս մեթոդները թույլ են տալիս՝

- ակտիվացնել և խթանել սովորողների ուսումնառմացական գործընթացը
- ձևավորել հաղորդակցական և անհատական կարողություններ խմբային աշխատանքի կազմակերպմամբ
- ապահովել սովորողների առարկայական և վերառարկայական կարողունակությունները և հմտությունները

Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը հանգեցնում է հետևյալ արդյունքներին՝

- ա) սովորողների իմացական գործունեության բարձրացում
- բ) թիմային աշխատանքի հմտությունների զարգացում
- գ) հաղորդակցման հմտությունների ձևավորում և զարգացում
- դ) ակտիվ լսելու հմտությունների զարգացում
- ե) որոշումներ կայացնելու հմտությունների զարգացում

7.Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ա., Մանկավարժություն, Մանկավարժ 2005
2. Արզումանյան Ա. Մ., Հայ. Գրականության դասավանդման մեթոդներ, Երևան 2020
3. Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020
4. Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա., Գրականություն 7-րդ դասարան, Անտարես, Երևան 2023

Հավելված 1

Օրվա դասի պլան

Առարկան՝ Գրականություն

Դասարան՝ 7-րդ << գ >> դասարան

Ուսուցիչ՝ Ա. Սաշայան

Դասի թեման՝ Եղիշե Չարենց, << Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծությունը (Էջ 10)

Դասի նպատակները, խնդիրները

- ✓ զարգացնել արտահայտիչ ընթերցելու կարողություն
- ✓ նպաստել աշակերտի բառապաշարի հարստացմանը
- ✓ սովորեցնել գրել կարծիք և հիմնավորել սեփական տեսակետը
- ✓ զարգացնել իրար հետ համագործակցելու, խորհրդակցելու, այլ տեսակետների առկայության դեպքում կարծիք հայտնելու հմտություններ

Վերջնարդյունքները

Աշակերտը կկարողանա՝

- ✓ արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը
- ✓ Նոր սովորած բառերը կիրառել գրավոր խոսքում՝ հարստացնելով բառապաշարը
- ✓ Ներկայացնել բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը
- ✓ փաստերը համադրելով՝ եզրակացություն կատարել
- ✓ վստահորեն հաղորդակցվել և համագործակցել դասընկերների, ուսուցչի հետ

Միջառարկայական կապեր- հայոց լեզու, հայոց պատմություն, աշխարհագրություն, երաժշտություն, մաթեմատիկա

Խաչվող հասկացություններ- անհատական և մշակութային արժեհամակարգ, ժամանակ և տարածություն

Դասի ընթացքը. Ներածություն, մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգիենա- (1-2 րոպե)

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը. (5 րոպե)
Աշակերտներին խթանելու համար դասը սկսվում է << Մտագրոհ >> մեթոդով: Գրատախտակին գրվում է << Հայաստան >> բառը և աշակերտներին առաջարկվում առանց մտածելու Հայաստանին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկել, որոնք գրանցվում են գրատախտակին

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը (30 րոպե)
Դասագրքի լուսանցքի QR կոդի միջոցով (10) աշակերտները ունենալու են << Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծությունը՝ Դ. Հակոբյանի ընթերցմամբ: Այնուհետև աշակերտներն իրենք են ընթերցում բանաստեղծությունը:

Այս փուլում կիրառվում է << Մտածի՛ր զու՛յգ կազմիր-քննարկիր >> մեթոդը: Աշակերտները զույգեր են կազմում և նստում 3 շարքով: Յուրաքանչյուր շարքի զույգերին տրվում են միանման առաջդրանքներ:

Սկզբում առաջարկում է մի քանի րոպե ինքնուրույն աշխատել առաջադրանքների վրա, ապա քննարկումը շարունակվում է զույգերով:

I շարք – Բանաստեղծությունից դուրս գրել անծանոթ բառերը և առցանց բառարանի օգնությամբ գրել բացատրությունը: Դրանցով կազմել նախադասություններ:

II շարք – Բանաստեղծությունից դուրս գրել և խմբավորել հետևյալ թեմաներին առնչվող բառեր և բառակապակցություններ:

Ա) Հայաստանի բնությունը

Բ) Հայաստանի մշակույթը

Գ) Հայաստանի անցյալը և ներկան (ըստ գրողի ապրած ժամանակաշրջանի)

Նշել, թե հայոց մեծերից ում է հիշատակում Չարենցը:

III շարք – Մի քանի նախադասությամբ վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունը, ապա գրել կարծիք բանաստեղծության մասին՝ վերհանելով հիմնական գաղափարը:

Չույգին տրվում է 25 րոպե: Այնուհետև յուրաքանչյուր շարքից մի քանի զույգեր ներկայացնում են իրենց աշխատանքների արդյունքները:

Վերջում շարքերի մյուս զույգերը մտքեր են փոխանակում, լրացնում միմյանց: (5 րոպե)

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը տևողությունը (10 րոպե) Այս փուլում ամփոփման համար օգտագործվում են ելքի քարտեր:

1. Նշիր՝ 3 բան, որ սովորեցիր այսօր
2. Նշիր՝ 2 բան, որ հետաքրքրեց քեզ
3. Նշիր՝ 1 բան, որ մնաց անհասկանալի

Գնահատումը կատարվում է գնահատման թերթիկի միջոցով՝ կիրառելով մաթեմատիկական կարողունակությունը. (տե՛ս Հավելված 5)

Տնային հանձնարարություն- Գրել ասույթներ << Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծության մասին, բանաստեղծությունը սովորել անգիր

Հավելված 2

Օրվա դասի պլան

Առարկան՝ Գրականություն

Դասարան՝ 7-րդ << գ >> դասարան

Ուսուցիչ՝ Ա. Սաշայան

Դասի թեման՝ Պատկերավորման միջոցները << Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծությունում: Գաղափար բանաստեղծության մասին

Դասի նպատակները, խնդիրները

- ✓ ձևավորել գիտելիքներ բանաստեղծության ժանրային, լեզվաոճական առանձնահատկությունների մասին
- ✓ նպաստել ստացած գիտելիքները ստեղծագործաբար վերարտադրելուն
- ✓ զարգացնել գեղագիտական ճաշակ
- ✓ զարգացնել իրար լսելու, կարծիքները ընդունելու, համագործակցելու հմտություններ

Վերջնարդյունքները

Աշակերտը կկարողանա՝

- ✓ տեքստից ընտրած օրինակով ներկայացնել բանաստեղծության ժանրային, պատկերավորման և արտահայտչական միջոցների առանձնահատկությունները
- ✓ բանաստեղծական տեքստը վերածել արձակի՝ կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները
- ✓ ստեղծագործաբար շարադրել իր մտքերը
- ✓ լսել դիմացինին առանց ընդհատելու և համագործակցել դասընկերների, ուսուցչի հետ
- ✓ ընդլայնել սեփական ուսումնառության հնարավորությունները՝ ձգտելով շարունակական ինքնազարգացման և ինքնակրթության

Միջառարկայական կապեր- հայոց լեզու, նկարչություն, մաթեմատիկա, երաժշտություն

Խաչվող հասկացություններ- կառուցվածք և գործառույթ, անհատական և մշակութային արժեհամակարգ

Դասի ընթացքը. Դասի սկզբում ստուգվում են տնային հանձնարարությունները: Աշակերտները կարդում են ասույթներ բանաստեղծության մասին, արտասանում բանաստեղծությունը և ունկնդրում Չարենցի բանաստեղծության հիման վրա գրված << Ես իմ անուշ Հայաստանի >> երգը: (10 րոպե)

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը. (5 րոպե) Կիրառվում է << Մտագրոհ >> մեթոդը: Աշակերտներին առաջարկվում է, Մարտիրոս Սարյանի << Հայաստան >> նկարը դիտելով, Հայաստանը առանձնահատուկ ձևով բնորոշող բառեր կամ բառակապակցություններ թվարկել, որոնք գրվում են գրատախտակին:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը (20 րոպե) Այս փուլում կիրառվում է խմբային աշխատանք: Աշակերտները բաժանվում են 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի տրվում են հետևյալ առաջադրանքները:

I խումբ- Դասագրքի լուսանցքներում տրված տեքստերից հավաքել տեղեկություններ բանաստեղծության մասին (էջ 10) և ներկայացնել բանավոր: Չափածո շարադրել մտքերը քո ծննդավայրի մասին՝ սկսելով << Ես իմ անուշ...>> տողով (1 քառատող):

II խումբ- Բանաստեղծությունից դուրս գրել համեմատություններն ու փոխաբերությունները և մեկնաբանել դրանք:

III խումբ- Բանաստեղծության որևէ տևից առանձնացնել մակդիրները, ապա ընթերցել բանաստեղծությունը առանց մակդիրների: Փորձել մեկնաբանել, թե ինչ դեր ունեն դրանք, այնուհետև ինքնուրույն մակդիրներ ավելացնել:

IV խումբ- Բանաստեղծական տեքստը վերածել արձակի՝ կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ ներկայացնում է կատարած աշխատանքի արդյունքները: Ապա խմբերը կարծիքներ են փոխանակում, լրացնում միմյանց:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը տևողությունը (10 րոպե) Այս փուլում ամփոփման համար կիրառվում է << 5 րոպեանոց շարադրանք >> մեթոդը, որն ուղղված է աշակերտների ստեղծագործական կարողություններ ձևավորմանը և երևակայության զարգացմանը: Աշակերտներին հանձնարարվում է գրել իրենց տպավորությունների և ցանկությունների, ինչպես նաև այն հարցի մասին, որի պատասխանը դեռ չգիտեն:

Գնահատումը կատարվում է գնահատման թերթիկի միջոցով: (տե՛ս հավելված 5)

Տնային հանձնարարություն- Գրել շարադրություն՝ << Իմ անուշ հայրենիք >> վերնագրով:

Հավելված 3

Օրվա դասի պլան

Առարկան՝ Գրականություն

Դասարան՝ 7-րդ դասարան

Ուսուցիչ՝ Ա. Սաշայան

Դասի թեման՝ Դերենիկ Դեմիրճյանի << Ավելորդը >> պատմվածքը (մաս 1-ին):
Պատմվածքի ժանրային բնութագիրը (էջ 19-24)

Դասի նպատակները, խնդիրները

- ✓ ձևավորել գիտելիք պատմվածքի ժանրային առանձնահատկությունների մասին
- ✓ զարգացնել արտահայտիչ և անսխալ ընթերցելու կարողություն
- ✓ նպաստել աշակերտի բառապաշարի հարստացմանը
- ✓ նպաստել կարծիք գրելու և սեփական տեսակետը հիմնավորելու կարողության զարգացմանը
- ✓ զարգացնել իրար հետ հաղորդակցելու, այլ տեսակետների առկայության դեպքում հանդուրժողակաբության վերաբերմունք դրսևորելու կարողություն

Վերջնարդյունքները

Աշակերտը կկարողանա՝

- ✓ տեքստից ընտրած օրինակներով ներկայացնել պատմվածքի ժանրային առանձնահատկությունները՝ համեմատելով նաև բանաստեղծության հետ
- ✓ արտահայտիչ և անսխալ ընթերցել գեղարվեստական տեքստը
- ✓ Նոր սովորած բառերը կիրառել գրավոր խոսքում՝ հարստացնելով բառապաշարը
- ✓ համապատասխան փաստերով ներկայացնել՝ ինչպես են արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը
- ✓ փաստերը համադրելով՝ եզրակացություն կատարել
- ✓ վստահորեն հաղորդակցվել դիմացինի հետ, այլ կարծիքների առկայության դեպքում հանդուրժողականության վերաբերմունք դրսևորել

Միջառարկայական կապեր- հայոց լեզու, հայոց պատմություն, նկարչություն, մաթեմատիկա

Խաչվող հասկացություններ- կառուցվածք և գործառույթ, անհատական և մշակութային արժեհամակարգ, ժամանակ և տարածություն, անհատ և հարաբերություններ

Դասի ընթացքը. ներածություն, մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում, հիգիենա- 1-2 րոպե

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը. (5 րոպե) Կիրառվում է << Մտագրոհ >> մեթոդը: Աշակերտներին առաջարկվում է, դասագրքում պատկերված Սալվադոր Դալիի << Մենություն >> նկարը դիտելով, առանց մտածելու թվարկել բառեր, որոնք առնչվում են նկարին: Բառերը գրանցվում են գրատախտակին:

Իմաստի ընկալման փուլի նկարագրությունը և տևողությունը (30 րոպե) Այս փուլում կիրառվում է << Ուղղորդված ընթերցանություն >> մեթոդը: Զանի որ պատմվածքը ծավալուն է, ըստ թեմատիկ պլանի՝ տեքստը նախօրոք բաժանվել է 3 մասի: Այս դասաժամին աշխատանքը կատարվում է առաջին մասի շուրջ: Ուղղորդված ընթերցանությանը զուգահեռ կիրառվում է նաև << **Մտածի՛ր-գու՛յգ կազմիր-քննարկի՛ր**>> մեթոդը: Աշակերտներին հանձնարարվում է զույգեր կազմել: Ապա սկսում են հաջորդաբար բարձրաձայն ընթերցել տեքստը, իսկ զույգերին հանձնարարվում է բացել տետրերը և ընթերցելուն զուգահեռ աշխատել տեքստի շուրջ: Ընթերցելու ընթացքում աշակերտները ուղղում են դասընկերների սխալները: Չույգերին հանձնարարվում է նաև ընթերցելուն զուգահեռ դուրս գրել անծանոթ բառերը: Կիրառվում է նաև << **Կանխագուշակումների աղյուսակ** >> մեթոդը: Չույգերը ուսուցչի կողմից առանձնացված յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո կանխագուշակում են, թե ինչ կարող է տեղի ունենալ հաջորդ հատվածում հենվելով կոնկրետ փաստերի վրա, և լրացնում նախապես գծված աղյուսակում: Ուսուցչի կողմից տրվում են ուղղորդող հարցեր, օրինակ, կռահել՝ ինչ ժամանակաշրջանում և որտեղ են տեղի ունենում իրադարձությունները՝ հենվելով փաստերի վրա, և այլն: Կատարվում են մեկնաբանություններ:

Ամբողջ հատվածն ընթերցելուց հետո զույգերին (ըստ շարքով) հանձնարարվում է կատարել հետևյալ առաջադրանքները.

I **շարք**- Առցանց բառարանի օգնությամբ գտնել դուրս գրած անծանոթ բառերի բացատրությունը և դրանցից մի քանիսով կազմել նախադասություններ

II **շարք**- Կարդալ դասագրքի լուսանցքում առկա նյութը պատմվածքի ժանրային բնութագրի մասին (էջ 20) և ներկայացնել բանավոր: **Վենի դիագրամի** միջոցով պատմվածքը համեմատել բանաստեղծության հետ

III **շարք**- Գրել կարծիք դասագրքում ընդգծված հատվածների վերաբերյալ (էջ 24)

Չույգերը ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքները, ապա փորձում կապ գտնել Խթանման փուլում թվարկված բառերի և << Ավելորդը >> վերնագրի միջև:

Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը տևողությունը (10 րոպե) Այս փուլում ամփոփման համար կիրառվում է **ԳՈՒՄ** մեթոդը: Աշակերտները ներկայացնում են, թե թեմայի մասին ինչ գիտեին, ինչ են ուզում իմանալ և ինչ սովորեցին:

Գնահատումը կատարվում է գնահատման թերթիկի միջոցով: (տե՛ս Հավելված 5)

Տնային հանձնարարություն- Ինքնուրույն կարդալ՝ << Ավելորդը >> պատմվածքի հաջորդ հատվածը (էջ 25-31), գրել զեկուցում հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների մասին

Հավելված 4
Հայտորոշիչ թեստ 1

1) Ո՞վ է Եղիշե Չարենցը:

ա) բանաստեղծ բ) արձակագիր գ) դրամատուրգ

2) Որտե՞ղ է ծնվել Եղիշե Չարենցը.

ա) Երևան բ) Էրզրում գ) Կարս դ) Գյումրի

3) Նշվածներից ո՞րն է Եղիշե Չարենցի իսկական ազգանունը:

ա) Կարապետյան գ) Սողոմոնյան
բ) Տեր-Գրիգորյան դ) Ղազարյան

4) Մորը նվիրված հետևյալ բանաստեղծություններից ո՞րն է պատկանում Եղիշե Չարենցի գրչին:

ա) << Կարծես թե դարձել եմ ես տուն >>
բ) << Մայրս փոքրիկ, մայրս խեղճ >>
գ) << Մորս համար գազել >>
դ) << Մոր ձեռքերը >>

5) Ո՞վ է նկարել << Եղիշե Չարենց >> դիմանկարը, որտեղ նկարիչը գրողի դիմանկարի կողքին պատկերել է դիմակ:

ա) Հակոբ Կոջոյան գ) Մարտիրոս Սարյան
բ) Վարդգես Սուրենյանց դ) Հովհաննես Այվազովսկի

6) Ո՞վ է գրել << Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծությունը:

7) Լրացրու բաց թողած բառերը.

Ահա նստած ես ——— դեմ ու ——— թթենին

Դեմքիդ ստվեր է զցել, մա'յր իմ ——— ու ——— :

Հայտորոշիչ թեստ 2

1) Ո՞րն է Եղիշե Չարենցի առաջին գիրքը:

ա) << Ծիածան >> գ) <<Երեք երգ տխրադալուկ աղջական >>
բ) << Երկիր Նաիրի >>

2) Կարս քաղաքն այժմ գտնվում է՝

ա) Վրաստանի Հանրապետությունում
բ) Արևմտյան Հայաստանում (Թուրքիա)
գ) Պարսկաստանում

Հավելված 5

Հարցաթերթիկ

- 1) Ո՞ր դեպքում ես ավելի հեշտ յուրացնում դասանյութը.
ա. զույգով կամ խմբով աշխատելիս
բ. երբ մենակ եմ աշխատում
- 2) Ո՞ր դեպքում ես դասապրոցեսին ակտիվ մասնակցում: Նշի՛ր քո նախընտրած անցկացման ձևը / կամ ձևերը /.
ա. խնդրի վրա զույգով աշխատանք
բ. դասարանական քննարկումներ
գ. երբ ուսուցիչն է ներկայացնում, բացատրում նոր նյութը
դ. խմբային աշխատանք փոքր խմբերով
- 3) Կարողանո՞ւմ ես առանձնացնել դասանյութի կարևորագույն առանցքային կետերը.
ա. ուսուցչի կամ դասընկերոջ ուղղորդմամբ
բ. ինքնուրույն գ. դժվարանում եմ
- 4) Կարողանո՞ւմ ես արդյոք ինքնուրույն աշխատել դասագրքով.
ա. ինքնուրույն
բ. ուսուցչի կամ դասընկերոջ ուղղորդմամբ
գ. դժվարանում եմ
- 5) Ի՞նչ ուսումնական կարիք ունես, որը կբարելավի գրականությունից քո ուսումնառությունը /ազա՛տ շարադրիր /:

Աղյուսակ

Գնահատման թերթիկ

N/N	Անուն- ազգանուն	Ինքնագնահատում	Փոխադարձ գնահատում	Ուսուցչի գնահատում	Ընդհանուր միավոր
1					
2					
3					
4					